2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Օգտագործված մեթոդները ներառում են սեփական հետազոտություններ և առկա գրականության զննում:

Ուսումնասիրության տարածք

Ուսումնասիրության տարածքը ներառում է երկրաբանական ուսումնասիրության համար հատկացված 50 հա տարածք: Այստեղ գերիշխող լանդշաֆտը խոնավ լեռնային տափաստանն է՝ ներառյալ մարգագետնային հատվածները, ինչպես նաև ծառերի և թփերի առանձին հատվածները: Գետափնյա տարածքը բաղկացած է հիմնական գետի մի փոքր մնացորդից, քանի որ հիմնական գետը ներառված է ստորգետնյա խողովակի մեջ: Այդ իսկ պատճառով ափամերձ տարածքը բավականին չոր է և որոշ չափով նման է շրջակա տափաստանային կամ մարգագետնային միջավայրերին:

Դաշտային հետազոտություններ

Դաշտային հետազոտությունն իրականացվել է 27.05.2023թ.-ին և ներառել է տարածքի թռչունների տրանսեկտային և կետային հետազոտություններ, նաև ցերեկային թիթեռների տրանսեկտային հետազոտություններ: Չնայած կենդանիների այլ խմբերով չի կատարվել հատուկ հաշվառում ստանդարտացված մեթոդաբանության օգտագործմամբ՝ սակայն գրանցվել են բոլոր այլ կենդանիները, որոնց հնարավոր է եղել դիտարկել կամ հայտնաբերել դրանց գործունեության հետքերը:

Գրականության ակնարկ

Գրականության ակնարկը ներառում է կաթնասունների, թռչունների, սողունների, երկկենցաղների, ձկների և միջատների վերաբերյալ բոլոր հնարավոր աղբյուրները՝ սկսած 1948 թվականից: Թռչունների ազգային մոնիտորինգի և Ցերեկային թիթեռների ազգային մոնիտորինգի տվյալների բազաները:

Տվյալների մշակում

Տեսակների մասին հավաքագրված տեղեկատվությունները ներկայացված են՝ հաշվի առնելով նրանց պահպանության կարգավիճակները Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում, Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և Բեռնի կոնվենցիայի 6-րդ ռեզոլյուցիայում: Այդ կատեգորիաներից մեկում ընդգրկված տեսակները համարվում են «առաջնահերթ տեսակներ»:

Արդյունքներ

Արդյունքները առանձնացված են կենդանիների յուրաքանչյուր խմբի համար, որոնց համար ստորև բերված բաժինները ներկայացնում են տեսակային կազմը և դրանց ընդգրկումը պահպանության ազգային կամ միջազգային ցուցակներում, ինչպես նաև առաջնահերթ տեսակների ամփոփումը՝ հաշվի առնելով տվյալների թարմությունը:

2.1 Կաթնասուններ

Ընհանուր առմամբ դիտարկվող և հարակից տարածքներում գրանցվել է կաթնասունների 21 տեսակ, որոնք պատկանում են 10 ընտանիքների և 5 կարգերի: Դրանցից 5 տեսակ ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում, 4 տեսակ՝ Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և 5 տեսակ՝ Բեռնի կոնվենցիայի 6-րդ ռեզոլյուցիայում: Կաթնասունների գրանցումների մեծ մասը պատկանում է 1950-ական (Dahl 1954) կամ 1980-ական թվականներին (Martirosyan & Papanyan 1983): Առաջնահերթ տեսակներն են. Հայկական սպիտակատամիկ, Գայլ, Գորշ արջ, Ջրասամույր, Բեզուարյան այծ, Մուֆլոն կամ վայրի ոչխար: Առաջնահերթ տեսակների ամենավերջին գրանցումները վերաբերում են 1983 թ.: Ուսումնասիրության արդյունքներով չեն հայտնաբերվել այս տեսակներից որևէ մեկի՝ «Էն Էռ Էմ (Նեյչրլ Ռիսորս Մենեջմենթ)» ՓԲ ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության իրավունքով հատկացված տարածքում բնակվելու կամ այս տարածքով միգրացիայի հետքեր:

Տեսակների ամբողջական ցանկը ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

No	Order / կարգ	Family / ընտանիք	Species Lat / Տեսակ լատիներեն	Species Arm / Տեսակ հայերեն	Status in IUCN Red List / ԲՊՄՄ Կարմիր գիրք	Status in Red Book of AM / ՀՀ Կարմիր գիրք	Presence in Bern Convention / Բեռնի կոնվենցիայում	Reference / աղբյուր
1	Eulipotyphla	Soricidae	*Crocidura armenica*	Հայկական սպիտակատամիկ	DD / ՏԱ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
2	Lagomorpha	Leporidae	*Lepus europaeus*	Եվրոպական նապաստակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
3	Rodentia	Dipodidae	*Allactaga williamsi*	Փոքրասիական ճագարամուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
4	Rodentia	Muridae	*Mus musculus*	Տնային մուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
5	Rodentia	Muridae	*Apodemus sylvaticus*	Սովորական անտառային մուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
6	Rodentia	Cricetidae	*Cricetulus migratorius*	մոխրագույն համաստերիկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
7	Rodentia	Cricetidae	*Arvicola terrestris*	Ջրամուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
8	Rodentia	Cricetidae	*Microtus arvalis*	Սովորական դաշտամուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
9	Rodentia	Cricetidae	*Microtus nivalis*	Ձյան դաշտամուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
10	Carnivora	Canidae	*Vulpes vulpes*	Սովորական աղվես	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
11	Carnivora	Canidae	*Canis lupus*	Գայլ	LC / ՆՄ	NE / ՉԳ	Res6 / Բեզ 6	Martirosyan & Papanyan 1983

12	Carnivora	Canidae	*Canis aureus*	Շնագայլ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
13	Carnivora	Mustelidae	*Ursus arctos*	Գորշ արջ	LC / ՆՄ	VU / ԽՈ	Res6 / Բեզ 6	Martirosyan & Papanyan 1983
14	Carnivora	Mustelidae	*Martes foina*	քարակզաքիս	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
15	Carnivora	Mustelidae	*Meles meles*	Գորշուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
16	Carnivora	Mustelidae	*Mustella nivalis*	Աքիս	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
17	Carnivora	Mustelidae	*Lutra lutra*	Ջրասամույր	NT / ՎՄ	EN / ՎՏ	Res6 / Բեզ 6	Martirosyan & Papanyan 1983
18	Artiodactyla	Suidae	*Sus scrofa*	Վայրի խոզ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
19	Artiodactyla	Cervidae	*Capreolus capreolus*	Այծյամ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Martirosyan & Papanyan 1983
20	Artiodactyla	Bovidae	*Capra aegagrus*	Բեզուարյան այծ	NT / ՎՄ	VU / ԽՈ	Res6 / Բեզ 6	Martirosyan & Papanyan 1983
21	Artiodactyla	Bovidae	*Ovis gmelini*	Մուֆլոն կամ վայրի ոչխար	VU / ԽՈ	VU / ԽՈ	Res6 / Բեզ 6	Aghasyan & Kalashyan 2010

NE / ՉԳ – Տեսակը գնահատված չէ
LC / ՆՄ – Նվազագույն մտահոգություն առաջացնող տեսակ
NT / ՎՄ – Վտանգվածին մոտ տեսակ
VU / ՆՄ – Խոցելի մոտ տեսակ
EN / ՆՄ – Վտանգված տեսակ
CR / ՆՄ – Կրիտիկապես վտանգված տեսակ
No / Ոչ – տեսակը գրանցված չէ Բեռնի կոնվենցիայում
Res 6 / Բեզ 6 – տեսակը գրանցված է Բեռնի կոնվենցիայի 6-րդ Բեզոլյուցիայում

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերագնահատման նպատակով հատկացված տարածքում երկրաբանական ուսումնասիրությունները վտանգ չեն ներկայացնում կաթնասունների առաջնահերթ տեսակների համար, մանավանդ, որ ուսումնասիրության արդյունքներով չեն հայտնաբերվել այս տեսակներից որևէ մեկի՝ «Էն Էռ Էմ (Նեյչրլ Ռիսորս Մենեջմենթ)» ՓԲ ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության իրավունքով հատկացված տարածքում բնակվելու կամ այս տարածքով միգրացիայի հետքեր:

2.2 Թռչուններ

Թռչունները ներկայացված են 55 տեսակով, որոնք պատկանում են 26 ընտանիքների և 11 կարգերի: Դրանցից 2 տեսակ ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում, 10 տեսակ՝ Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և 12 տեսակ՝ Բեռնի կոնվենցիայի 6-րդ ռեզոլյուցիայում:

Թռչունների տեսակների մեծ մասը պարզապես անցնում են տարածքով սեզոնային միգրացիայի ժամանակ կամ օգտագործում են այս տարածքը որպես իրենց ավելի մեծ կերային տիրույթի մաս: Ուսումնասիրության արդյունքներով չեն հայտնաբերվել առաջնահերթ տեսակներից որևէ մեկի՝ «Էն Էռ Էմ (Նեյչրլ Ռիսորս Մենեջմենթ)» ՓԲ ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության իրավունքով հատկացված տարածքում բնադրելու նշաններ կամ հետքեր: 5 տեսակ, գրանցված Բերնի կոնվենցիային 6-րդ Հավելվածում՝ Այծկիթ *Caprimulgus europaeus*, Անտառային արտույտ *Lullula arborea*, Կապտափող սոխակ *Luscinia svecica*, Ժուլան *Lanius collurio* և Այգու դրախտապան Emberiza hortulana: Տեսակների ամբողջական ցանկը ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

No	Order / կարգ	Family / ընտանիք	Species Lat / Տեսակ լատիներեն	Species Arm / Տեսակ հայերեն	Status in IUCN Red List / ԲՊՄՄ Կարմիր գիրք	Status in Red Book of AM / ՀՀ Կարմիր գիրք	Presence in Bern Convention / Բեռնի կոնվենցիայում	Reference / աղբյուր
1	Galliformes	Phasianidae	*Perdix perdix*	Անապատային կաքավ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
2	Accipitriformes	Phasianidae	*Coturnix coturnix*	Լոր	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3513, 46.0254
3	Accipitriformes	Accipitridae	*Ciconia nigra*	Սև արագիլ	LC / ՆՄ	VU / ԽՈ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
4	Accipitriformes	Accipitridae	*Pernis apivorus*	Կրետակեր	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
5	Accipitriformes	Accipitridae	*Milvus migrans*	Սև ցին	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
6	Accipitriformes	Accipitridae	*Gypaetus barbatus*	Գառնանգղ	NT / ՎՄ	VU / ԽՈ	Res6 / Բեզ 6	NatBirdMon DB 2022
7	Accipitriformes	Accipitridae	*Neophron percnopterus*	Գիշանգղ	EN / ՎՏ	EN / ՎՏ	Res6 / Բեզ 6	NatBirdMon DB 2022
8	Accipitriformes	Accipitridae	*Gyps fulvus*	Սպիտակագլուխ անգղ	LC / ՆՄ	VU / ԽՈ	Res6 / Բեզ 6	NatBirdMon DB 2022
9	Accipitriformes	Accipitridae	*Buteo buteo*	Մեծ ճուռակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
10	Accipitriformes	Accipitridae	*Buteo rufinus*	Տափաստանային ճուռակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	Res6 / Բեզ 6	Դաշտային դիտարկում 39.3548, 46.0255
11	Accipitriformes	Accipitridae	*Clanga pomarina*	Փոքր ենթաարծիվ	LC / ՆՄ	VU / ԽՈ	Res6 / Բեզ 6	NatBirdMon DB 2022
12	Accipitriformes	Accipitridae	*Aquila chrysaetos*	Քարարծիվ	LC / ՆՄ	VU / ԽՈ	Res6 / Բեզ 6	NatBirdMon DB 2022

13	Accipitriformes	Accipitridae	*Hieraaetus pennatus*	Գաճաճ արծիվ	LC / ՆՄ	VU / ԽՌ	Res6 / Բեզ 6	NatBirdMon DB 2022
14	Accipitriformes	Falconidae	*Falco tinnunculus*	Սովորական հողմավար բազե	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
15	Gruiformes	Gruidae	*Anthropoides virgo*	Գեղանի կռունկ	LC / ՆՄ	VU / ԽՌ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
16	Columbiiformes	Columbiidae	*Columba livia*	Թխակապույտ աղավնի	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
17	Columbiiformes	Columbiidae	*Columba palumbus*	Անտառային աղավնի	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
18	Cuculiiformes	Cuculidae	*Cuculus canorus*	Սովորական կկու	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
19	Strigiformes	Strigidae	*Athene noctua*	Տնային բվիկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
20	Caprimulgiformes	Caprimulgidae	*Caprimulgus europaeus*	Այծկիթ	LC / ՆՄ	NE / ՉԳ	Res6 / Բեզ 6	NatBirdMon DB 2022
21	Apodiformes	Apodidae	*Apus apus*	Սև մանգաղաթև	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
22	Coraciiformes	Meropidae	*Merops apiaster*	Ոսկեգույն մեղվակեր	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
23	Bucerotiformes	Upupidae	*Upupa epops*	Հոպոպ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
24	Passeriformes	Alaudidae	*Lullula arborea*	Անտառային արտույտ	LC / ՆՄ	NE / ՉԳ	Res6 / Բեզ 6	Դաշտային դիտարկում
25	Passeriformes	Alaudidae	*Alauda arvensis*	Դաշտային արտույտ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
26	Passeriformes	Hirundinidae	*Ptyonoprogne rupestris*	Ժայռային ծիծեռնակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
27	Passeriformes	Hirundinidae	*Hirundo rustica*	Գյուղական ծիծեռնակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
28	Passeriformes	Hirundinidae	*Delichon urbica*	Քաղաքային ծիծեռնակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022

29	Passeriformes	Motacillidae	*Anthus trivialis*	Անտառային ձիաթռչնակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
30	Passeriformes	Motacillidae	*Motacilla cinerea*	Լեռնային խաղտտնիկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
31	Passeriformes	Motacillidae	*Motacilla alba*	Սպիտակ խաղտտնիկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
32	Passeriformes	Turdidae	*Turdus torquatus*	Սպիտակախածի կեռնեխ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3522, 46.0297
33	Passeriformes	Turdidae	*Turdus merula*	Սև կեռնեխ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
34	Passeriformes	Turdidae	*Turdus viscivorus*	Սոսնձակեռնեխ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
35	Passeriformes	Muscicapidae	*Luscinia svecica*	Կապտափող սոխակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	Res6 / Բեզ 6	NatBirdMon DB 2022
36	Passeriformes	Muscicapidae	*Phoenicurus ochruros*	Սևուկ կարմրատուտ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
37	Passeriformes	Muscicapidae	*Saxicola rubetra*	Մարգագետնային չքչքան	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
38	Passeriformes	Muscicapidae	*Oenanthe oenanthe*	Սովորական քարաթռչնակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
39	Passeriformes	Muscicapidae	*Monticola saxatilis*	Խայտաբղետ քարակեռնեխ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
40	Passeriformes	Scotocercidae	*Cettia cetti*	Լայնապոչ եղեգնաթռչնակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
41	Passeriformes	Acrocephalidae	*Acrocephalus palustris*	Ճահճային եղեգնաթռչնակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
42	Passeriformes	Sylviidae	*Sylvia communis*	Մոխրագույն շահրիկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
43	Passeriformes	Sittidae	*Sitta neumayer*	Ժայռային փոքր սիտեղ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
44	Passeriformes	Tichodromidae	*Tichodroma muraria*	Կարմրաթև մագլցող	LC / ՆՄ	VU / ԽՈ	No / Ոչ	NatBirdMon DB 2022

45	Passeriformes	Laniidae	*Lanius collurio*	Ժուլան	LC / ՆՄ	NE / ՉԳ	Res6 / Ռեզ 6	Դաշտային դիտարկում 39.3522, 46.0297
46	Passeriformes	Corvidae	*Garrulus glandarius*	Անտառային կաչաղակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
47	Passeriformes	Corvidae	*Pica pica*	Սովորական կաչաղակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
48	Passeriformes	Corvidae	*Corvus corax*	Սև ագռավ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
49	Passeriformes	Passeridae	*Petronia petronia*	Ժայռային ճնճղուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
50	Passeriformes	Fringillidae	*Linaria cannabina*	Կանեփնուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
51	Passeriformes	Fringillidae	*Linaria flavirostris*	Լեռնային վշասարեկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatBirdMon DB 2022
52	Passeriformes	Fringillidae	*Carpodacus erythrinus*	Սովորական ոսպնու	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
53	Passeriformes	Emberizidae	*Emberiza cia*	Լեռնային դրախտապան	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
54	Passeriformes	Emberizidae	*Emberiza hortulana*	Այգու դրախտապան	LC / ՆՄ	NE / ՉԳ	Res6 / Ռեզ 6	Դաշտային դիտարկում 39.3513, 46.0254
55	Passeriformes	Emberizidae	*Emberiza melanocephala*	Սևագլուխ դրախտապան	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում

NE / ՉԳ – Տեսակը գնահատված չէ
LC / ՆՄ – Նվազագույն մտահոգություն առաջացնող տեսակ
NT / ՎՄ – Վտանգվածին մոտ տեսակ
VU / ՆՄ – Խոցելի մոտ տեսակ
EN / ՆՄ – Վտանգված տեսակ
CR / ՆՄ – Կրիտիկապես վտանգված տեսակ
No / Ոչ – տեսակը գրանցված չէ Բեռնի կոնվենցիայում
Res 6 / Ռեզ 6 – տեսակը գրանցված է Բեռնի կոնվենցիայի 6-րդ Ռեզոլյուցիայում

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերագնահատման նպատակով հատկացված տարածքում երկրաբանական ուսումնասիրությունները վտանգ չեն ներկայացնի բնադրող թռչունների առաջնահերթ տեսակների համար, եթե կատարվեն բնադրման շրջանից դուրս (այսինքն՝ բացառելով մայիսի 10-ից մինչև հունիսի 10-ը ընկած ժամանակահատվածը):

Իսկ մնացած առաջնահերթ տեսակների թվում չկան այնպիսի թռչուններ, որոնք բնակվում են տարածքում, և մնացած բոլոր առաջնահերթ տեսակները պարզապես անցնում են տարածքով սեզոնային միգրացիայի ժամանակ, կամ այս տարածքն օգտագործում են որպես իրենց ավելի մեծ կերային տիրույթի մաս:

Հետագայում, ցանկալի է սեզոնային ուսումնասիրություններ կատարել, առավել ճշգրիտ եզրակացությունների համար:

Նկար 43. Saxicola rubetra

Նկար 44. Turdus torquatus

Նկար 45. Lanius collurio

Նկար 46. Emberiza hortulana

2.3 Սողուններ

Սողունները ներկայացված են 9 տեսակով, որոնք պատկանում են 6 ընտանիքի և 1 կարգի: Նրանցից 1 տեսակ ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում, 1 տեսակ՝ Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և 1 տեսակ՝ Բեռնի կոնվենցիայի 6-րդ ռեզոլյուցիայում: Ուսումնասիրության արդյունքներով չեն հայտնաբերվել այս տեսակներից որևէ մեկի՝ «Էն Էռ Էմ (Նեյչրլ Ռիսորս Մենեջմենթ)» ՓԲ ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության իրավունքով հատկացված տարածքում բնակվելու կամ այս տարածքով միգրացիայի նշաններ կամ հետքեր:
Տեսակների ամբողջական ցանկը ներկայացված է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

No	Order / կարգ	Family / ընտանիք	Species Lat / Տեսակ լատիներեն	Species Arm / Տեսակ հայերեն	Status in IUCN Red List / ԲՊՄՄ Կարմիր գիրք	Status in Red Book of AM / ՀՀ Կարմիր գիրք	Presence in Bern Convention / Բեռնի կոնվենցիայում	Reference / աղբյուր
1	Squamata	Agamidae	Laudakia caucasia	Կովկասյան լեռնային ագամա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Arakelyan et al. 2011
2	Squamata	Colubridae	Hemorrhois ravergieri	Խայտաբղետ սահնօձ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Arakelyan et al. 2011
3	Squamata	Lacertidae	Lacerta media	Միջին մողես	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Arakelyan et al. 2011
4	Squamata	Lacertidae	Darevskia raddei	Ռադդեի ժայռային մողես	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Arakelyan et al. 2011
5	Squamata	Scincidae	Ablepharus bivittatus	գծավոր մերկաչք	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Arakelyan et al. 2011
6	Squamata	Colubridae	Coronella austriaca	Սովորական պղնձօձ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Arakelyan et al. 2011
7	Squamata	Colubridae	Elaphe sauromates	Պալլասի մագլցող սահնօձ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Arakelyan et al. 2011
8	Squamata	Colubridae	Natrix natrix	Սովորական լորտու	LC / ՆՄ	NE / ՉԳ	Res6 / Բեզ 6	Arakelyan et al. 2011
9	Squamata	Viperidae	Vipera eriwanensis	Հայկական լեռնատափաստային իժ	VU / ԽՈ	VU / ԽՈ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3535, 46.0300

NE / ՉԳ – Տեսակը գնահատված չէ
LC / ՆՄ – Նվազագույն մտահոգություն ներշնչող տեսակ
NT / ՎՄ – Վտանգվածին մոտ տեսակ
VU / ՆՄ – Խոցելի մոտ տեսակ
EN / ՆՄ – Վտանգված տեսակ
CR / ՆՄ – Կրիտիկապես վտանգված տեսակ
No / Ոչ – տեսակը գրանցված չէ Բեռնի կոնվենցիայում
Res 6 / Ռեզ 6 – տեսակը գրանցված է Բեռնի կոնվենցիայի 6-րդ Ռեզոլյուցիայում

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերագնահատման նպատակով հատկացված տարածքում երկրաբանական ուսումնասիրությունները վտանգ չեն ներկայացնի սողունների համար:

2.4 Երկկենցաղներ

Երկկենցաղները ներկայացված են 3 տեսակով, որոնք պատկանում են 2 ընտանիքի և 1 կարգի: Նրանց թվում չկան Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում, Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում կամ Բեռնի կոնվենցիայի 6-րդ ռեզոլյուցիայում ընդգրկված տեսակներ: Տեսակների ամբողջական ցանկը ներկայացված է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

No	Order / կարգ	Family / ընտանիք	Species Lat / Տեսակ լատիներեն	Species Arm / Տեսակ հայերեն	Status in IUCN Red List / ԲՊՄՄ Կարմիր գիրք	Status in Red Book of AM / ՀՀ Կարմիր գիրք	Presence in Bern Convention / Բեռնի կոնվենցիայում	Reference / աղբյուր
1	Anura	Bufonidae	*Pseudepidalea viridis*	կանաչ դոդոշ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Stepanyan 2014
2	Anura	Ranidae	*Rana macrocnemis*	Փոքրասիական գորտ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Stepanyan 2014
3	Anura	Ranidae	*Pelophylax ridibundus*	լճագորտ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Stepanyan 2014

NE / ՉԳ – Տեսակը գնահատված չե

LC / ՆՄ – Նվազագույն մտահոգություն ներշնչող տեսակ

NT / ՎՄ – Վտանգվածին մոտ տեսակ

VU / ՆՄ – Խոցելի մոտ տեսակ

EN / ՆՄ – Վտանգված տեսակ

CR / ՆՄ – Կրիտիկապես վտանգված տեսակ

No / Ոչ – տեսակը գրանցված չե Բեռնի կոնվենցիայում

Res 6 / Ռեզ 6 – տեսակը գրանցված է Բեռնի կոնվենցիայի 6-րդ Ռեզոլյուցիայում

2.5 Ձկներ

Ձկներն ընդհանրապես ներկայացված չեն ուսումնասիրվող տարածքում, սակայն դրանք ներկայացված են գետի ստորին հոսանքում, որտեղ դրանք ներկայացված են 10 տեսակներով, որոնք պատկանում են 3 ընտանիքների և 2 կարգերի: Դրանց թվում չկան Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում, Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և Բեռնի կոնվենցիայի 6-րդ ռեզոլյուցիայում ընդգրկված տեսակներ:

Տեսակների ամբողջական ցանկը ներկայացված է Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

No	Order / կարգ	Family / ընտանիք	Species Lat / Տեսակ լատիներեն	Species Arm / Տեսակ հայերեն	Status in IUCN Red List / ԲՊՄՄ Կարմիր գիրք	Status in Red Book of AM / ՀՀ Կարմիր գիրք	Presence in Bern Convention / Բեռնի կոնվենցիայում	Reference / աղբյուր
1	Salmoniformes	Salmonidae	Oncorhynchus mykiss	Ծիածանախայտ ֆորել, Ծիածանափայլ ֆորել	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021
2	Salmoniformes	Salmonidae	Salmo trutta m. fario	Կարմրախայտ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021
3	Cypriniformes	Nemacheilidae	Oxynoemacheilus brandtii	Կուրի լերկաձուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021
4	Cypriniformes	Cyprinidae	Carassius gibelio	Արծաթափայլ կարաս	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021
5	Cypriniformes	Cyprinidae	Capoeta capoeta	Կուրի կողակ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021
6	Cypriniformes	Cyprinidae	Barbus cyri	Կուրի բեղաձուկ	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021
7	Cypriniformes	Cyprinidae	Ctenopharmyngodon idella	Սպիտակ ամուր	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021
8	Cypriniformes	Cyprinidae	Pseudorasbora parva	Ամուրյան նրբաձուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021

9	Cypriniformes	Cyprinidae	Alburnoides eichwaldii	Արևելյան տառեխիկ, Արևելյան արագաշարժ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021
10	Cypriniformes	Cyprinidae	Alburnus filippii	Կուրի սպիտակաձուկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Pipoyan 2021

NE / ՉԳ – Տեսակը գնահատված չէ
LC / ՆՄ – Նվազագույն մտահոգություն առաջացնող տեսակ
NT / ՎՄ – Վտանգվածին մոտ տեսակ
VU / ՆՄ – Խոցելի մոտ տեսակ
EN / ՆՄ – Վտանգված տեսակ
CR / ՆՄ – Կրիտիկապես վտանգված տեսակ
No / Ոչ – տեսակը գրանցված չէ Բեռնի կոնվենցիայում
Res 6 / Բեզ 6 – տեսակը գրանցված է Բեռնի կոնվենցիայի 6-րդ Բեզոլյուցիայում

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերագնահատման նպատակով հատկացված տարածքում երկրաբանական ուսումնասիրությունները վտանգ չեն ներկայացնի ձկների տեսակների համար, որոնք ապրում են ստորին հոսանքում:

2.6 Միջատներ

Միջատները լավ ներկայացված չեն գրականության մեջ և ազգային տվյալների բազաներում: Բզեզների մասին որոշ տվյալներ կան գրականության մեջ, մինչդեռ ցերեկային թիթեռների մասին տվյալները առկա են Ազգային Թիթեռների մոնիտորինգի տվյալների բազայում: Հետևաբար, որոշ վերապահումներով կարելի է փաստել, որ միջատների մեջ հանդիպում են 59 տեսակ, որոնք պատկանում են 7 ընտանիքների և 2 կարգերի: Դրանց թվում չկան Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր ցուցակում, Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, Բեռնի կոնվենցիայի 6-րդ ռեզոլյուցիայում ընդգրկված տեսակներ:

Տեսակների ամբողջական ցանկը ներկայացված է Աղյուսակներ 9-ում և 10-ում:

Աղյուսակ 9

No	Order / կարգ	Family / ընտանիք	Species Lat / Տեսակ լատիներեն	Species Arm / Տեսակ հայերեն	Status in IUCN Red List / ԲՊՄՄ Կարմիր գիրք	Status in Red Book of AM / ՀՀ Կարմիր գիրք	Presence in Bern Convention / Բեռնի կոնվենցիայում	Reference / աղբյուր
1	Coleoptera	Cerambycidae	Cortodera umbripennis		NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Plavilshikov 1948
2	Coleoptera	Cerambycidae	Dorcadion scabricolle	Սկաբրիկոլլե երկարաբեղիկ	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Plavilshikov 1948
3	Coleoptera	Cerambycidae	Dorcadion seminudum	Կիսամերկ երկարաբեղիկ	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Plavilshikov 1948
4	Coleoptera	Cerambycidae	Dorcadion dimidiatum	Դիմիդիաթում երկարաբեղիկ	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Plavilshikov 1948
5	Coleoptera	Cerambycidae	Dorcadion bistriatum	Երկգիծ երկարաբեղիկ	NE / ՉԳ	EN / ՎՏ	No / Ոչ	Plavilshikov 1948
6	Coleoptera	Cerambycidae	Mallosia scovitzi	Սկովիչի երկարաբեղիկ	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Plavilshikov 1948
7	Coleoptera	Carabidae	Carabus cribratus	Գնայուկ կրիբրատուս	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Yablokov-Khnzoryan 1976
8	Coleoptera	Carabidae	Carabus calleyi	Գնայուկ կելեյի	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Yablokov-Khnzoryan 1976
9	Coleoptera	Carabidae	Cicindella campestris		NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Yablokov-Khnzoryan 1976

NE / ՉԳ – Տեսակը գնահատված չէ
LC / ՆՄ – Նվազագույն մտահոգություն առաջացնող տեսակ
NT / ՎՄ – Վտանգվածին մոտ տեսակ
VU / ՆՄ – Խոցելի մոտ տեսակ
EN / ՆՄ – Վտանգված տեսակ

CR / ՆՄ – Կրիտիկապես վտանգված տեսակ
No / Ոչ – տեսակը գրանցված չէ Բեռնի կոնվենցիայում
Res 6 / Ռեզ 6 – տեսակը գրանցված է Բեռնի կոնվենցիայի 6-րդ Ռեզոլյուցիայում

Աղյուսակ 10

No	Order / կարգ	Family / ընտանիք	Species Lat / Տեսակ լատիներեն	Species Arm / Տեսակ հայերեն	Status in IUCN Red List / ԲՊՄՄ Կարմիր գիրք	Status in Red Book of AM / ՀՀ Կարմիր գիրք	Presence in Bern Convention / Բեռնի կոնվենցիայում	Reference / աղբյուր
1	Lepidoptera	Hesperiidae	Erynnis tages	Թագես հաստագլխիկ	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
2	Lepidoptera	Hesperiidae	Carcharodus alceae	Ալցեա հաստագլխիկ	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3525, 46.0256
3	Lepidoptera	Hesperiidae	Pyrgus sidae	Սիդա հաստագլխիկ	NE / ՉԳ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
4	Lepidoptera	Hesperiidae	Thymelicus lineola	Գծիկավոր հաստագլխիկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3525, 46.0256
5	Lepidoptera	Hesperiidae	Thymelicus sylvestris	Անտառային հաստագլխիկ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3525, 46.0256
6	Lepidoptera	Papilionidae	Parnassius apollo	Ապոլոն	LC / ՆՄ	VU	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
7	Lepidoptera	Papilionidae	Papilio machaon	Մաքաոն	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
8	Lepidoptera	Pieridae	Pontia edusa	Էդուսա սպիտակաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
9	Lepidoptera	Pieridae	Pieris pseudorapae	Պսեվդորապա սպիտակաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում

10	Lepidoptera	Pieridae	Pieris brassicae	Կաղամբաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
11	Lepidoptera	Pieridae	Colias alfacariensis	Հարավային դեղնաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
12	Lepidoptera	Pieridae	Colias crocea	Կրոցեա դեղնաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
13	Lepidoptera	Lycaenidae	Lycaena phlaeas	Ֆլեաս կապտաթիթե	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
14	Lepidoptera	Lycaenidae	Lycaena virgaurea	Կրակոտ կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
15	Lepidoptera	Lycaenidae	Lycaena candens	Կանդենս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
16	Lepidoptera	Lycaenidae	Lycaena alciphron	Ալցիֆրոն կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
17	Lepidoptera	Lycaenidae	Lycaena thersamon	Թերզամոն կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
18	Lepidoptera	Lycaenidae	Cupido minima	Փոքր կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
19	Lepidoptera	Lycaenidae	Cupido osiris	Օսիրի կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
20	Lepidoptera	Lycaenidae	Pseudophilotes vicrama	Վիկրամա կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
21	Lepidoptera	Lycaenidae	Glaucopsyche alexis	Ալեքսիս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
22	Lepidoptera	Lycaenidae	Plebeius argus	Արգուս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
23	Lepidoptera	Lycaenidae	Aricia agestis	Ագեսթիս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
24	Lepidoptera	Lycaenidae	Aricia anteros	Անթերոս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022

25	Lepidoptera	Lycaenidae	Cyaniris bellis	Բելլիս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
26	Lepidoptera	Lycaenidae	Polyommatus coelestina	Երկնային կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3531, 46.0298
27	Lepidoptera	Lycaenidae	Polyommatus bellargus	Բելարգուս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3531, 46.0298
28	Lepidoptera	Lycaenidae	Polyommatus corydonius	Կորիդոնիուս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
29	Lepidoptera	Lycaenidae	Polyommatus daphnis	Դաֆնիս կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
30	Lepidoptera	Lycaenidae	Polyommatus icarus	Իկար կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
31	Lepidoptera	Lycaenidae	Polyommatus amandus	Ամանդա կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
32	Lepidoptera	Lycaenidae	Polyommatus thersites	Թերզիթ կապտաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
33	Lepidoptera	Lycaenidae	Lasiommata megera	Մեգերա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
34	Lepidoptera	Lycaenidae	Lasiommata maera	Մերա սաթիր	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
35	Lepidoptera	Lycaenidae	Melanargia russiae	Ռուսական բազմակն	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
36	Lepidoptera	Lycaenidae	Coenonympha pamphilus	Պամֆիլուս	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
37	Lepidoptera	Lycaenidae	Coenonympha leander	Լեանդեր	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
38	Lepidoptera	Lycaenidae	Erebia medusa	Սևուկ մեդուզա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
39	Lepidoptera	Lycaenidae	Hyponephele lycaon	Լիկաոն	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022

40	Lepidoptera	Lycaenidae	Maniola jurtina	Յուրթինա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
41	Lepidoptera	Lycaenidae	Arethusana arethusa	Արեթուզա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
42	Lepidoptera	Nymphalidae	Chazara briseis	Բրիզեիդա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
43	Lepidoptera	Nymphalidae	Vanessa atalanta	Ադմիրալ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3531, 46.0298
44	Lepidoptera	Nymphalidae	Vanessa cardui	Կռատուկի վանեսսա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
45	Lepidoptera	Nymphalidae	Aglais urticae	Եղնջաթիթեռ	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
46	Lepidoptera	Nymphalidae	Issoria lathonia	Լաթոնիա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
47	Lepidoptera	Nymphalidae	Brenthis hecate	Հեկաթա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	NatButterflyMon DB 2022
48	Lepidoptera	Nymphalidae	Euphydryas aurinia	Աուրինիա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
49	Lepidoptera	Nymphalidae	Melitaea didyma	Դիդիմա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում
50	Lepidoptera	Nymphalidae	Melitaea cinxia	Ցինքսիա	LC / ՆՄ	NE / ՉԳ	No / Ոչ	Դաշտային դիտարկում 39.3523, 46.0266

NE / ՉԳ – Տեսակը գնահատված չէ
LC / ՆՄ – Նվազագույն մտահոգություն առաջացնող տեսակ
NT / ՎՄ – Վտանգվածին մոտ տեսակ
VU / ՆՄ – Խոցելի մոտ տեսակ
EN / ՆՄ – Վտանգված տեսակ
CR / ՆՄ – Կրիտիկապես վտանգված տեսակ
No / Ոչ – տեսակը գրանցված չէ Բեռնի կոնվենցիայում
Res 6 / Ռեզ 6 – տեսակը գրանցված է Բեռնի կոնվենցիայի 6-րդ Ռեզոլյուցիայում

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերագնահատման նպատակով հատկացված տարածքում երկրաբանական ուսումնասիրությունները վտանգ չեն ներկայացնի միջատների առաջնահերթ տեսակների համար:

Նկար 47. Lasiommata maera

Նկար 48. Arethusana arethusa

Նկար 49. Polyommatus coelestina

Նկար 50. Polyommatus icarus

Գրականություն

No	Short Name / կարճ անվանումը	Full Reference / լրիվ անվանումը
1	Adamian & Klem	Adamian MS & D Klem. 1999. Handbook of the Birds of Armenia. American University of Armenia, USA.
2	Aghasyan & Kalashyan 2010	Aghasyan A & M Kalashyan (eds). 2010. The Red Book of Animals of the Republic ofArmenia. Zangak, Yerevan.
3	Dahl 1953	Dahl SK. 1953. [Essay on vertebrate fauna of Bargushat and Meghri Mountain Ranges. Zoological DigestYerevan] 8: 5–65. [In Russian]
4	Dahl 1954	Dahl SK. 1954. [Fauna of the Armenian SSR . Vertebrates.] USSR Academy of Sciences Press, Yerevan. [InRussian]
5	Lyaister & Sosnin 1942	Lyaister AF & GV Sosnin. 1942. [Materials on ornithofauna of the Armenian SSR] (Ornis Armeniaca). ARMFAN,Yerevan. [In Russian]
6	Movsesyan & Ayrumyan 1987	Movsesyan SO & KA Ayrumyan (eds). 1987. [Red Data Book of Armenia]. Armenian Academy of Sciences,Yerevan. [In Russian]
7	Stepanyan 2014	Ilona Stepanyan. "Current protection status of Armenian amphibians and elaboration of measures of their conservation including public awareness rising" Rufford 2014
8	Martirosyan & Papanyan 1983	Martirosyan B. A., Papanyan S. B.. Wild Mammals of Armenia. Yerevan 1983 [In Armenian]
9	Arakelyan et al. 2011	Marine S. Arakelyan, Felix D. Danielyan, Claudia Corti, Roberto Sindaco, and Alan E. Leviton, Herpetofauna of Armenia and Nagorno-Karabakh, Society for the study of amphybians and reptiles, 2011
10	Pipoyan 2021	Pipoyan S. 2021. Field guied of fish species of Armenia. Antares, Yerevan 2021 [In Armenian]
11	Plavilshikov 1948	Plavilshikov N.N. 1948. Qualifier to Longhorn beetles of Armenia. Yerevan: Publishing house of the Academy of Sciences of ASSR. [In Russian]
12	Yablokov-Khnzoryan 1976	Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. Жужелицы (Carabidae), часть 1 // Ереван, Изд. АН АрмССР. 1976. 295 с.
13	NatButterflyMon DB 2022	Butterfly Conservation Armenia. 2022. Database of National Butterfly Monitoring. BirdLinks Armenia NGO.
14	NatBirdMon DB 2022	BirdLinks Armenia. 2022. Database of National Bird Monitoring. BirdLinks Armenia NGO.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրությունների համար նախատեսված տարածքում հայտնաբերվել է 275 տեսակ բարձրակարգ բույս,
- Բուսականությունը հիմնականում լեռնատափաստանային է: Արտահայտված են նաև մարգագետնատափաստանները, մարգագետինները, ինչպես նաև գետամերձ բուսականությունը: Տարածքում տեղ-տեղ արտահայտված է թփուտային, ժայռային և քարացրոնային բուսականությունը,
- Գերակշռում են Բարդածաղկավորների, Հացազգիների, Վարդազգիների, Շրթնածաղկավորների, Լոբազգիների, Խաչածաղկավորների և այլ ընտանիքներին պատկանող տեսակները,
- Բուսատեսակների հիմնական կենսաձևերը բազմամյա, այնուհետև միամյա խոտաբույսերն են,
- Չնայած ծառերի և թփերի տեսակների մեծ քանակին (համապատասխանաբար 10 և 12 տեսակ), հանքի տարածքում դրանք մեծ կենսազանգված չեն կազմում, հանդիպելով միայն փոքր պուրակներում, թփուտներում և գետակի երկարությամբ,
- Դաստակերտի ուսումնասիրված տարածքում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը,
- Ուսումնասիրված տարածքի տեսակների մեջ առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Բույսերի կարմիր գրքում կամ ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) կարմիր ցուցակում գրանցված բույսերի տեսակները բացակայում են:
- Ուսումնասիրված տարածքի տեսակների մեջ հայտնաբերվել է ՀՀ տարածքում լայնորեն տարածված միջսառցադաշտային մեկ ռելիկտային տեսակ (Շյուղախոտ վալլիսյան),
- Ուսումնասիրված տարածքում հայտնաբերվել են Հայաստանի և Կովկասի մեկական էնդեմիկ տեսակներ (Տիվարսակ աջարական, Բարակոտնուկ Ալբովի),
- Օգտակար բույսերը տարածքում թե տեսակների քանակով, թե կենսազանգվածով բավականին աղքատ են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում,
- Հանքի շահագործվող տարածքում սահմանափակ քանակով ներկայացված են մոլախոտային մի շարք բուսատեսակներ,

✓ Բուսականության վիճակը ուսումնասիրվող տարածքի և դրանց շրջակա գոտիներում հիմնականում բավարար է, որոշ էռոզիոն պրոցեսներ են նկատվում երկրաբանական ուսումնասիրության համար հատկացված տարածքում:

✓ Նշված հատվածներում հանքի տարածքի հետախուզման համար ֆլորայի և բուսականության առումով որևէ առարկություն չկա:

✓ Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի վերագնահատման նպատակով հատկացված տարածքում երկրաբանական ուսումնասիրությունները վտանգ չեն ներկայացնի կենդանական աշխարհի վտանգված և ՀՀ Կարմիր գրքում գրանցված ներկայացուցիչների համար:

Փորձագետներ.

կ.գ.դ. Իվան Գաբրիելյան

կ.գ.թ. Կարեն Աղաբաբյան